

## ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԻ ՀԱՆՁՆՈՒՄԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈ ՄԵԶ

Հայաստանեն վերադարձած կրոնական և աշխարհական պատգամավորներու ներկայությունը և մասնավանդ անոնց հրապարակային հայրենաշունչ արտահայտությունները հաղարակոր ունկնդիրներու առջև, կարծեք շունչ մը բերին այս գաղութին, տարապայման ոգևորություն կը տիրե ամենուրեք. հայրենաշիրական իսանդավառ սարսուներ թունդ կը հանեն ամենեն անտարբեր սրտերը իսկ որովհետեւ միամիտներոն ու կուլյերն անգամ սկսած են տեսնել ու զգալ այն մեծ իրողությունը, որ մեր ազատ Հայրենիքն է՝ վեց հարյուր տարիներու տառապանքներին հառնած Հայաստանը, որ իր հաղթական ներկայով և լուսավայժառ ապագայով կը սրտապնդ մեզ:

Զանագան կազմակերպությանց և Միությանց կողմեա տրված բանախոսական գեղեցիկ ու ոգևորիչ հանդիսություններուն մեջ՝ ամենեն ավելի սակայն իր սրտառուշ բռվանդակությամբ, իր վեհմատ խորհուրդով և խորապես տպակորիչ նշանակությամբ խանդավառեց մեզ սրբազն արարողությունը հայրենի հողի հանձնումին, որ տեղի ունեցավ «Տիգրան Երվաթ»-ի սըրահներուն մեզ:

Ներկա էին Ն. Ն. Գ. Տիրան Եպիսկ. Ներսոյան, Մամրե Առքեափիս. Գալֆայան, Հրգեց. Տ. Պասկ Վրբ. Թումայան, Արժ. Տ. Կարապետ Քնյայ. Գալֆայան, Արժ. Տ. Մեսրոպ և Ղևոնդ Հայրեն, Ամերիկահայ պատգամավորները, Առք. Ռժվանության անդամներ, Ակումբներու Վարչություններ և Հոռ ու խանդավառ հասարակությունները:

Գեղարվեստական բաժինեն հետո խոսք առին հաջորդաբար մեր պատգամավորները:

### ԽՈՍՔ՝ ԸՆԿԵՐ ՄԵԹՐ Պ. ԹԵՐԳՅԱՆԻ

Այս նվիրական պահուն ի՞նչ կա ավելի խորհրդավոր ու գեղեցիկ, քան այս բոռ մը հողը՝ ազատ Հայրենիքն բերված մեր պանդուխտ երիտասարդության. անոր մեջ կը խտանա Հայության վեց հարյուր տարիներու տառապանքներուն պատմությունը, այդ ափ մը հողին մեջ կը բովանդակվին մեր պապերում փոշիացած նշանակները, մեր ողբացյալ սիրելիներուն արցունքները, վերջապես այս հողը խորհրդանիշն է մեր ժողովուրդի աննկուն ոգիին, պետք է որ Սփյուռքի հայ երիտասարդությունը ապրի այդ ոգիով, գործե այդ ոգիով, որով կը

ապրին այսօր մեր քաջարի երիտասարդները Հայաստանի մեջ:

ԽՈՍՔ՝ ԳԵՐ. Տ. ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊՈՒ. ԳԱԼՅԱՅԱՆԻ

Ի՞նչ խանդավառ հետաքրքրություն է, զոր կը ցուցադրի երիտասարդներու այս բազմությունը Հայրենիքն բերված այս բաժակ մը հողին համար. թե միայն տարբեցները չեն, որ կը սիրեն Հայրենիքը, ատոր սրտապնդիչ ապացուցը կը տրվի մեզի այս պահուն, Մեր մայր մտածումը պետք է ըլլա այսօր սկեռնել մեր նայլածքները գեղի Արարատ և ոգևորվիլ մեր երկրին սահմաններուն ընդառաջնումի հուսագրից հավանականությունով, Այս բաժակ մը հողին պետք չէ հասարակ աշխով նայինք, հողի շատ ըստարձակ տարրածություններ կան. բայց ասիկա էցմիածնեն քաղված Հայրենիքի գաղափարին հետ մեր հավատքին ալ խորհրդանիշն է նոյն ատեն:

### ԽՈՍՔ՝ ԸՆԿԵՐ ՃԻՄ ԶԱՆԳԱՅԱՆԻ

Այս հողը տեսա ես հայ ժողովուրդի սովաճար և ամենեն դժբախտ տարիներուն, 1916-ին. եթե այսօր կարենար խոսիլ ինչեր պիտի շաբաթմեր աշխարհին, Քսանենիսուգ տարի վերջ այդ սովաճար և հալածական ժողովուրդը աշբածած է կովող, հայ զինվորներ հաղթական կը քայլեն այդ հողին վրայեն, մի՛ զարմանաք, եթե մոտ ապագային իմանաք անունները Վանի և Մուշի հայկական նահանգներուն:

### ԽՈՍՔ՝ ԳԵՐ. Տ. ՏԻՐԱՆ ԵՊՍ. ՆԵՐՍՈՅԱՆԻ

Ի՞նչ գեղեցիկ շենքեր, ի՞նչ հոյակապ կառուցումներ, ի՞նչ տաղանդավոր մարդիկ կերտված են այս հողնեն: Ասկե բուսած են մեր կոսավորիչները, մեր եկեղեցականները, մեր թագավորները և մեր բանատեղծները: Այս հողեն բուսավ Հայաստանը. այս կենսասար ուժը, որ առաջ բերավ մեր հին մեծությունները, այս հողին մեջ նետված սերմերեն բուսան: Զգալ այս բուս մը հողին մեջ մեր ցեղին արմանք՝ ապրիլ է հայրենիքի գաղափարով և հավատքով:

### ԽՈՍՔ՝ ԱՐԺ. Տ. ԿԱՐԱՊԵՏ ՔՀՆՅ. ԳԱԼՅԱՅԱՆԻ

Սիրելի ունկնդիրներ, ատենոք երբ կը հարցնեինք թե արդյոք մենք ալ Պետություն

պիտի ունենա՞նք, պիտի ունենա՞նք բազա-  
րական ազատ կյանքի պայմաններ ուրիշ  
բախտավոր ազգերու պես, այսիս մտա-  
ծելը այն ժամանակ երազ կը թվեր մեղի.  
բայց այսօր որ այդ երազը պատկած է ա-  
ղատ հայրենիքի բաղզը իրականությունով,  
այս ափ մը հողը, որ հայրենիքը կը ներ-  
կայացնե, կպատկանիր բովանդակ Հայու-  
թյան:

### ԽՈՍՔԻ ԸՆԿԵՐ ԱԼ. ՍԱՐՈՒԻԽԱՆԻ

- Անցյալին մեջ շատ մը կռունկներ գաղ-  
թած են արտասահման, ո'չ մեկ ընդունե-  
լություն անոնց, որովհետև անոնք ջարողի և  
զուլումի սկ լուրեր կը բերեին մեզի:  
Դուք, նոր կռունկներ ավերակներե հառ-  
նած Հայրենիքն, կ ողջունվիք գրկաբաց և  
խանդավառ ովաննաներով, որովհետև  
հաղթական և ազատ Հայաստանին կռւ-  
գաք: Անցան մեր զուլումի օրերը:

Ի՞նչ բան է որ այսքան կ ոգեսրի մեզ  
այս պահուս, որ ուժ ու հավատք կռւտա  
մեր հոգիներուն, որ լեզու և ներշնչում  
կռւտա մեր ավետարեր կռունկներուն:  
Այս փոքրիկ անորին մեջ հանգչող բուռ մը  
հողն է, որ հյուլեական ոռոմքի մը մեծու-

թյունը ունի և անոր ահավեր զորությունը.  
(գլուգագին ծափեր): Այս բաժակ մը հայ-  
րենի հողը մեր հյուլեական ուժն է, որ  
պիտի պողպատե մեր կամքը, պիտի բաղ-  
մապատկե մեր եռամդը և պիտի մղե մեզ  
վերելքի նոր և հզոր խոյանքներու:

ԽՈՍՔԻ ՀՈԳԾ. Տ. ՊԱԱԿ ՎՐԴ. ԹՈՒՄԱՅԱՆԻ

Ունինք սրվակ մը հող այստեղ Հայրե-  
նի երկրեն բերված, անոր մեջ գուք պիտի  
գտնեք հայկականության ոգին. Ս. Սահակ-  
ներու և Մեսրոպներու մոխրացած նշխար-  
ները, մեր թանկարժեք ձեռագիրներուն մա-  
սունքները, մեր հայրենակար աշուղներու  
տաղերուն փշրանքները. Թող այս հողը իր  
սրբազն խորհուրդովը լեցնե եղիպտոսի  
մեր երիտասարդության և մանկության  
հոգիները, որպեսզի ապրի և գործե մեր  
ապագա սերունդը Հայաստանի մեր կտրիճ  
եղբայրներուն և քույրերուն անպարտելի  
ոգիով և տեսլականով:

Հայրենասիրական այս հույժ ոգմորիշ  
հանդիսությունը վերջ գտավ բոլորին կող-  
մե միահամուռ երգված Տերունական ա-  
ղոթքով:

ԹՈՒՄԱԿԻՑ  
(«Արև» թիվ 8139 1945 թ.)

